

Սոսե Բ. Պողոսյան¹

Նոր Զուղա, Իրան

ՏԱՂԱՍԱՑ ԱՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻՆ*

Բանալի բառեր – Ստեփանոս Դաշտեցի, տաղ, տաղասաց, երգիծական-պարսավական տաղեր, խրատական-իմաստասիրական տաղեր, Նոր Զուղայի վաճառականներ, Սպահան, Նոր Զուղայի բարբառներ, 17-18-րդ դդ. հայ գրականություն, թափախ:

Մուտք

Հայ միջնադարյան գրականության մեջ կան առանձնակի ուսումնասիրության կարոտ հեղինակներ, որոնց գործերը ոչ միայն լրացնում են հայ գրականության պատմության այս կամ այն շրջափուլը, այլև մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժամանակաշրջանը և տարածաշրջանի մարդկանց կյանքն ու առօրյան քողազերծելու տեսանկյունից: Հայոց պետականության բացակայության պայմաններում ազգային արվեստն ու գրականությունը զարգանում էին հայաշատ գաղթօջախներում կամ տվյալ ժամանակաշրջանի զարգացած մեծ քաղաքներում, ինչպես, օրինակ, Թիֆլիսում, որտեղ 17-րդ դարում նախ փայլեց Նաղաշ Հովնաթանը, իսկ նրա թողած ավանդների ժառանգորդն ու հաջորդողը դարձավ հայ միջնադարյան գրականության վերջին խոշոր ներկայացուցիչ, աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովան:

Բռնագաղթի հետևանքով Պարսկաստանում հաստատված հայերի համայնքը ևս կարճ ժամանակահատվածում վերածնվելով երկու ու ներքին կազմակերպված կյանքի անցավ: Նոր Զուղան միջնադարյան աշխարհին հայտնի դարձավ ոչ միայն վաճառականությամբ, այլև մշակույթով՝ թողնելով մատենագիտական հարուստ ժառանգություն:

Նախ ասպարեզ եկան մի շարք աշուղներ, որոնք ժողովրդաաշուղական բանավոր գրականության, երգ ու խաղի հենքի վրա ստեղծեցին ի-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 24.11.2021:
1 Անձնագրով **Սոսե Փ. Քողոսյան (Sosch P. Boghozian):**

րենց երգերը՝ համեմելով դրանք հայկական հոգեբանությանը բնորոշ տարրերով: Այս համայնքի ծնունդն է նաև Ստ. Դաշտեցին, ով, ստեղծագործելով ժողովրդական մոտիվներով և հորինելով խաղիկներ, այնուամենայնիվ, գրականության պատմաբանների կողմից արժանացել է **բանաստեղծ** կոչմանը:

1. Ստեփանոս Դաշտեցու կյանքն ու գրական գործունեությունը

Ստ. Դաշտեցին հայտնի է Ս. Սոմալի «Հայ մատենագրության պատմություն» իտալերեն աշխատության շնորհիվ, որում տեսաբանը նրան կոչում է «հակաճառող հեղինակ»², ծանոթ լինելով միայն նրա գրույց-բանավեճերին, և Հ. Յ. Տաշյանի «Ցուցակի»՝ որպես «Մախաղ փշրանց», «Կոչնակ ճշմարտության» և «Խնդիր ուղղության (կամ ճշմարտության)» աստվածաբանական-վիճաբանական երկերի հեղինակ, որոնք պահվում են Վենետիկի Մխիթարյան գրչատանը:

Ստ. Դաշտեցու մասին Սիմոն Սիմոնյանը 1981 թվականին լույս տեսած իր «Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի» ուսումնասիրության մեջ նշում է, որ նա «ցարդ անձանօթ անուն մըն է որպէս տաղասաց»³: Եվ մինչ այդ նրա ստեղծագործության վերաբերյալ կարելի է գտնել թերի և մասնակի արժևորումներ միայն: Օրինակ՝ Արշակ Չոպանյանը, ծանոթ լինելով Ստ. Դաշտեցու մի թույլ ոտանավորին միայն, գրում է. «Այս աշուղը հեռու է Կոստանդին Երզնկացիի մը կամ Յովհաննէս Թլկուրանցիի մը խոր ներշնչումն և ինքնաբուխ ու նուրբ ոճն ունենալէ»⁴:

Ս. Սիմոնյանն իր ուսումնասիրության ներածականում մեջբերում է Սայաթ-Նովայի վերլուծաբան Մորուս Հասրաթյանի, ցավոք, միայն բանավոր գնահատականը, ով, «Սփյուռք»-ում ծանոթանալով Դաշտեցու գործերին, այսպես է արտահայտվել նրա մասին. «Մեր մեծագոյն տաղասացներից մէկը, գուցէ աւելի մեծ քան...»⁵: Ըստ Սիմոնյանի՝ Գարեգին Լևոնյանի, Գևորգ Ալավերդյանի, Լեոյի և մի քանի այլ հեղինակների գրքերում հիշատակված Ստեփանոսները ոչ մի աղերս չունեն Դաշտեցի Ստեփանոսի հետ, ավելին՝ տարբեր թվականների ու վայրերի երգիչներ են:

Ստեփանոս Դաշտեցու կյանքի ու գրական գործունեության ուսումնասիրությամբ զբաղված մեկ այլ հետազոտող՝ Ռ. Աբրահամյանը, խոսելով Դաշտեցու՝ ուսումնասիրված կամ չուսումնասիրված հեղինակ լինելու մա-

2 Տե՛ս **Սիմոնյան Ս.**, Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի, Պէյրուք, 1981, էջ 9:
3 Նույն տեղում:
4 **Չոպանյան Ա.**, Ստեփանոս Դաշտեցիի մէկ հետաքրքրական գրուածքը, «Անահիտ», Փարիզ, 1939, N 1-2, էջ 1:
5 Նույն տեղում:

սին, նշում է, որ նրա վերաբերյալ փաստական տվյալներ շատ քիչ են մնացել: Ուստի Դաշտեցու կենսագրությունն ընդհանուր գծերով կարելի է վերականգնել միայն նրա աշխատություններում պահպանված կցկտուր հիշատակությունների հիման վրա:

Դաշտեցին ապրել ու գործել է 17-րդ դ. երկրորդ կեսին և 18-րդ դ. առաջին քառորդին: Նա իր ինքնագիր ձեռագրի մի հիշատակարանում, որը գրել է 1714 թվականին, ակնարկում է, որ «... ծեր է ամենևին»⁶: Սրանից կարելի է ենթադրել, որ նա ծնված պիտի լիներ 17-րդ դ. 40-50-ական թվականներին:

Ստեփանոս Դաշտեցու ծննդավայրը Նոր Զուղան է: Նրա ծնողները Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ Նոր Զուղա են տեղափոխվել Գողթն գավառի Հին Զուղայի Դաշտ գյուղից, որտեղից էլ՝ նրա մականունը:

Իր մի բանաստեղծության վերջում Դաշտեցին գրում է.

**Է անունն իմ Ստեփանոս,
Որ ի Դաշտէ եղէ սերեալ,
Թէպէտ հաւն իմ տեղափոխմամբ
Ի յԱսպահան եղև տարեալ⁷:**

Հայրը Բարսեղ քահանան էր. «Որ եմ ամենանուաստ ծառայ,- գրում է նա,- ապիրատ... Ստեփանոս Բասիլիոս Շիրուփականկեան, ի Դաշտէն գողթնեաց, սերունդս յԱսպահանայ»⁸:

Դաշտեցին կրթությունը ստացել է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում, աշակերտել է Ստեփանոս Զուղայեցուն՝ մասնագիտանալով փիլիսոփայական ու աստվածաբանական գիտությունների մեջ: Սոմալի վկայությամբ, որը հավանաբար օգտվել է Վատիկանի ձեռագրի աղբյուրներից, նախնական կրթությունը Սպահանում ստանալուց հետո Դաշտեցին սովորել է Հռոմում՝ Վատիկանի բարձրագույն դպրոցում⁹: Տիրապետել է գրաբարին, պարսկերենին, թուրքերենին, վրացերենին, լատիներենին և հնդկերենին: Բարձր կրթության մասին է վկայում նաև այն, որ Դաշտեցին օգտվել է հին և միջնադարյան հայ մատենագրության աչքի ընկնող գրեթե բոլոր հեղինակներից: Իր աշխատություններում նա քաղվածքներ ունի Ագաթանգեղոսից, Մովսես Խորենացուց, Դավիթ Անհաղթից, Գրիգոր Նարեկացուց, Գրիգոր Տաթևացուց, Ներսես Կլայեցուց (Շնորհալի) և բազմա-

6 Աբրահամյան Ռ., Ստեփանոս Դաշտեցի, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1956, N 12, էջ 102:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

9 Տե՛ս Սիմոնեան Ս., նշվ. աշխ., էջ 14-15:

թիվ այլ մատենագիրներից: Սոմալը նրան բնութագրում է որպես «այր հմուտ եւ մարզ ոչ միայն հայկական, այլ եւ եւրոպական ուսմանց մէջ»¹⁰: Նա այնքան կրթված էր և պատրաստված, որ համարձակվել է վեճի մեջ մտնել ժամանակի այնպիսի զարգացած անձնավորությունների հետ, ինչպիսիք էին Հովհաննես Մրբուզը և Ալեքսանդր Ջուղայեցին:

Դաշտեցին գրել է կրոնական աշխատություններ և զբաղվել է նաև կրոնական բանավեճերով: «Նա նույնպես սկզբում եղել էր հոգևորական, օժտված էր բանաստեղծական փայլուն ձիրքով ու փիլիսոփայական կարողություններով, բայց հանգամանքների թելադրանքով հրաժարվել էր այդ ամենից և ընտրել առևտրականի վտանգալից ու անապահով կենսաձևը»¹¹: Եղել է վաճառական և շրջագայել զանազան երկրներում. «... ի մանկութենէ իմմէ և ցարդ ևս՝ գլեալ թաւալիմ ընդ երեսօք բոլորակի գնդի աշխարհիս»¹²: Եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, Թուրքիայում, Հունաստանում, Իտալիայում և եվրոպական մի շարք երկրներում: Իր ճանապարհորդությունների ընթացքում Դաշտեցին շատ բան է տեսել ու սովորել, ինչը նրան դարձրել է շրջահայաց, փորձառու, համբերատար, իմաստուն:

Ստեփանոս Դաշտեցու ստեղծագործությունը կարող ենք բաժանել երկու խմբի՝ ա) աստվածաբանական-վիճաբանական երկեր, բ) տաղեր: Հեղինակն առավելապես հայտնի է իր աստվածաբանական-վիճաբանական երկերով: Մինչդեռ նրա՝ գրական և հասարակական գործչի կերպարը թերի է առանց տաղերգության ուսումնասիրության:

2. Ստեփանոս Դաշտեցու տաղերի ընդհանուր բնութագիրը

Ստ. Դաշտեցու տաղերը զետեղված են միակ ձեռագրի մեջ, որը կրում է «Տօմար Ազարիայի, և Պարզատօմար ի վերայ Ազարիայի ամսոցն կարգեալ. և Տաղք և Ոտանաւորք. և այլ բանք և իմաստք տօմարականք, հոգևորականք, և պատմութենականք» վերնագիրը և պահվում է Անթիլիասի կաթողիկոսարանի գրչագրատանը: Ձեռագրի «Տաղք և Ոտանաւորք» բաժնում են Դաշտեցու տաղերը՝ բացառությամբ «Գանգատ ըստգ[տ]անաց ապստամբողի անձին նոյնոյ մեղապարտի Ստեփաննոսի ուրեմն Դաշտեւոյ» տաղի, որը Վիեննայի թիվ 20 ձեռագրում է, և «Մախաղ փշրանց» երկի սկզբի ու վերջի փոքրիկ տաղերի, որոնց տողերի սկզբնատառերը կազ-

10 Մեջբերումը ըստ Սիմոնեան Ա., նշվ. աշխ., էջ 15 (Sukias Somal, Quadro della Storia Letteraria di Armeni, Venezia, 1829, p. 171):

11 Միրզոյան Հ., Հովհաննես Մրբուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 45:

12 Դաշտեցի Ստ., Կոչնակ ճշմարտութեան, Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ծեռ. N 9049, էջ 5ա-բ:

մում են նրա անունը¹³: Ստ. Դաշտեցու հիմնական տաղերն ամփոփող ձեռագիրը կազմվել է Պետրոս դպիրի աշխատությանը 1754 թվականին Բանկալայում: Ձեռագրի գրության թվականը և վայրը ենթադրել են տալիս, որ այն հեղինակի տաղերի անմիջական ընդօրինակությունն է:

Ստ. Դաշտեցու տաղերն ունեն բովանդակային մեկ ընդհանրություն. իմաստասիրական, խրատաբարոյական բնույթի են և ուղղված են նորջուղայեցիների բարոյակրթությանը: Սակայն մատուցման առումով դրանք ունեն որոշակի տարբերություն. երբեմն բանաստեղծը երգիծանքով ներկայացնում է Նոր Ջուղայի հայ համայնքում տարածված հոռի բարքերը, քննադատում ու պարսավում է դրանք, երբեմն էլ, իմաստասիրական խրատներ տալով, փորձում է կրթել ժողովրդին: Այս երկու առանձնահատկություններից ելնելով է, թերևս, Ս. Սիմոնյանը Դաշտեցու տաղերը բաժանել երկու խմբի՝ երգիծական-պարսավական և խրատական-իմաստասիրական:

3. Երգիծական-պարսավական տաղեր

Ստ. Դաշտեցուց մեզ են հասել երգիծական-պարսավական հինգ տաղեր, որոնք հայ երգիծական գրականության չափածո հնագույն օրինակներից են: Դրանցում շեշտվում է խայթելու և սուր քննադատության գիծը, որը տարածվում է նաև Ստ. Դաշտեցու բոլոր տաղերի վրա՝ դառնալով հեղինակի խոսքի առանձնահատկությունը. դա հետևանքն է այն մթնոլորտի, որում ապրում էր Սպահանի հայությունն իր դարում: «Նոր Ջուղայու մեծամեծաց վատ և անկարգ արարմանց վասն՝ ոտանաւոր, զոր շարադրեալ է Դաշտեցի Փանոսն աշխարհաբար լեզուաւ» տաղում հեղինակը մատնանշում է հատկապես այդ՝ ծաղրելու և հեգնանքով արտահայտվելու հակաքրիստոնեական արատը, որը տարածված էր իր հայրենակիցների շրջանում.

**Շինիս դաստուր եւ ծէսն էս այ,
Որ օտարի տնագ կ'անեն:
Ինչ կու խօսեն, շատ կէսն էսայ,
Որ օտարի տնագ կ'անեն¹⁴:**

Այդ արատն իսկական չարիք էր Նոր Ջուղայում ծաղկող ու բարգավաճող համայնքի համար: Հղփացած վաճառականներից կազմված խավն ուներ բարոյական մոլորություններ, որոնց դեմ անզոր էին աստվածաբանական գրականությունն ու հոգևոր քարոզչությունը: Որտեղ ապարդյուն

13 Տե՛ս Սիմոնեան Ս., նշվ. աշխ., էջ 26-28:

14 Նույն տեղում, էջ 41: Այսուհետ այս գրքից բոլոր մեջբերումների էջերը կնշվեն տեքստում:

Էր բարոյական խրատը, այնտեղ ազդու և համակշիռ զենք էին հեգնանքն ու սուր քննադատությունը:

Այնուհետև տաղասացը սկսում է թվարկել տարածված մոլորությունները՝ կեղծավորությունը, ժլատությունը, օտարասիրությունը, անգրագիտությունը, նախանձը՝ յուրաքանչյուր տան ավարտին ընդգծելով նրանց գլխավոր արատը՝ «դեռ ուրիշի տնազ կ'անեն»:

**Դուրսն՝ դմակ, ներսն՝ դանակ,
Ամէն չարիք հազար գունակ,
Թամամ երկրում վատ օրինակ,
Դեռ օտարի տնազ կ'անեն: (42)**

Կամ՝

**Ո՛ւմ կայ կարդալ կամ ո՛ւմ կայ ջանք,
Մեծ ու պստիկ աստուածաբանք,
Վանքն է՛ Բուրդի արծաթահանք,
Դեռ ուրիշի տնազ կ'անեն: (43)**

Ստ. Դաշտեցին տաղն ամփոփելու համար դիմում է սեփական աչքի գերանի և ուրիշի աչքի շյուղի աստվածաշնչյան այլաբանությանը և մեղադրում իրեն, իր իսկ արատները թողած, ուրիշներին քննադատելու մեջ.

**Ստէփան՝, աչքումդ ունես գերան,
Ո՛չ շոմէն աս, ո՛չ փրփերան,
Մեղայ ասա՛ հազար բերան,
Չում ուրիշի տնազ կ'անես: (45)**

Ժողովրդական ստեղծագործությունների հնարանքներն ավելի մեծ չափով օգտագործել են 17-րդ դ. երկրորդ կեսին հանդես եկած բանաստեղծները: Հաճախ հանդիպող հնարանքներից են չափազանցությունն ու հակադրությունը, որոնք վարպետորեն օգտագործել է նաև Ստ. Դաշտեցին, հատկապես ծաղրական-պարսավական գործերում, որոնցից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Ջուղայեցուց հայրենի՝ գրոց լեզուն պարզ այ, զոր կու պարծենան» տաղը, որը հայ բարբառագիտության պատմության համար մեծ արժեք կարող է ունենալ:

Ընտաքրքրական է այն, որ ջուղայեցիները պարծենում էին իրենց լեզվով, այն գրաբարին մոտ, բարձր ու ազնվական լեզու էին համարում և ծաղրում Նոր Ջուղա գաղթած գավառականների բարբառները.

**Ջուղայեցիք անք՝ կու պարծենք,
Մեք մեր լիզուն գրոց կարծենք.
Ով գրափառք չնի խօսման՝
Հըլդաքիկա կը քարգործենք: (46)**

Եվ ամբողջ տաղում Ստ. Դաշտեցին ներկայացնում է Ջուղայում տա-
րածված բարբառների օրինակներ քառյակ առ քառյակ՝ իբր ջուղայեցիների
բերանով ծաղրելով շրջակա գյուղերի ու ավանների (Դաշտ, Ղափան,
Վան, Գազկի, Ագուլխա, Շամբ) բնակիչների խոսվածքները և դրանց ա-
ռանձնահատկությունները.

**Վանըցիքըն տիր անխել ան,
Մեր գրրըճին կ'ասեն մելան.
Մին օր մեր տան դոստ յիշեցինք,
Առվան վերկացին դուս ելան: (47)**

Կամ՝

**Դաշտըցիք գատ ճանաչման չեն,
Խօր անումըն՝ հայը կու կանչեն.
Այծ ան ասում խաշվի թա էծ.
Գրոց լիզուն յիմանան չեն: (47)**

Նույն ձևով «պախարակվում են» նրանք, ովքեր «տգետ են» ու չեն խո-
սում «գրոց» լեզվով, և գովաբանվում նրանք, ովքեր իրենց նման «գրա-
բար» են խոսում, մինչդեռ Ստ. Դաշտեցին հակադրության միջոցով ցույց է
տալիս, որ իրականում ջուղայեցիների լեզուն է, որ աղձատված է բարբա-
ռային բառերով.

**Մեք շամբեցոց անք, շատ խօվան,
Գրափառքում տիր խամով ան.
Ասելէն՝ ասմանամ կ'ասեն,
Մեզ պէս գրոց լիզվի ծովան: (47)**

Որպես ժամանակի սոցիալ-քաղաքական հարաբերությունների ար-
տացույցներ արժեքավոր են նաև բանաստեղծական այն երկերը, որոն-
ցում ներկայացվում է ժամանակի հոգևորականությունը՝ իր հոռի կողմե-
րով: Այդպիսի երկեր են, օրինակ, 17-րդ դ. հեղինակներ Սիմոն Լեհացու

«Վիպասանությունն Նիկոլական», Հակոբ Ստեցու «Վասն պախարակելոյ օրինագանցիցն», Մարտիրոս Դրիմեցու, Նաղաշ Հովնաթանի և Քոսա Երեցի երգիծական ոտանավորները:

Պետականության բացակայության պայմաններում հայերի ինքնության պահպանման համար կարևոր դեր ունենին լուսավորչական կրոնն ու եկեղեցին, իսկ ժողովրդի անսասան հավատի երաշխավորները բանիմաց ու անշահախնդիր հոգևորականներն էին: Ինչպես Ա. Մարտիրոսյանն է իրավացիորեն գնահատում ժամանակի հայ հոգևորականի դերը ժողովրդի կյանքում, պետական իշխանության բացակայության պայմաններում նա էր «միակ պաշտոնյան, միակ հասարակական գործիչը, որը պետք է ծառայեր ժողովրդին»¹⁵: Սակայն, ցավոք, նրանք հաճախ շեղվում էին իրենց առաքելությունից՝ թույլ տալով ոչ բարոյական արարքներ: Այս չարիքից անմասն չէր նաև Նոր Զուղան: Ստ. Դաշտեցին ծաղրով է ներկայացրել հոգևորականներին իր «Առ հանդերձիք միայն երեւեալ վարդապետս ումանս, որք ձեւանան իբրեւ զգիտունս՝ թերեւս երկայն սօրուօքն իւրեանց» ոտանավորում: Ինչպես նկատում է Հ. Սահակյանը, «երկը դավանաբանական գունավորում ունի»¹⁶: Ստ. Դաշտեցին շատ է գրել հայ հոգևորականության դեմ, սակայն դա չի նսեմացնում երկի արժեքը, քանի որ հեղինակը ճշգրտորեն ներկայացնում է Նոր Զուղայի հոգևորականության թերությունների ընդհանուր պատկերը: Ոտանավորը կառուցված է ենթաբնագրում դրված հակադրության հնարանքով: «Ծաղրն ստեղծվում է միտումնավոր կերպով առատ օգտագործված գրաբար խորհրդանշանների և քերականական նրբիմացությունների և ծաղրվող վարդապետների տգիտության հակադրությամբ»¹⁷: Արդեն առաջին տողերում հեղինակը գրում է, որ թեև այդ վարդապետներն իրենց մեծ քերականներ են համարում և պատրաստ են վիճելու լեզվական հարցերի շուրջ, սակայն քերականության ամենատարրական կանոններն իսկ չգիտեն:

**Տրամաբանեն առ ի կոչիլ վարպետք եւ գէտք,
բայց բնաբանն եւ վերջ բանին չլինի հանգէտք: (45)**

Կամ՝
**Ներիմաստից կամին առնել վէճ եւ ըզդաւ,
բայց ո՛չ գիտեն տարորոշել զլերկն եւ զթաւ: (45)**

15 Մարտիրոսյան Ա., Մարտիրոս Դրիմեցի, Եր., 1958, էջ 51:
16 Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը. XVI-XVII դդ., հատ. 1, Եր., 1975, էջ 85:
17 Նույն տեղում:

Եվ այսպես ամբողջ ոտանավորում հակադրության միջոցով նույն միտքն է արտահայտվում, հաճախ՝ կենցաղին առնչվող հարցերով: Անկեղծ ու անմիջական լեզուն է, որ Ստ. Դաշտեցու խոսքը դարձնում է ազդեցիկ և հատու:

4. Խոհախրատական–ինաստասիրական տաղեր

Ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու հասարակական երևույթները ավելի լայն արձագանք են գտել Ստ. Դաշտեցու բարոյախրատական տաղերում ու քառյակներում:

Ինչպես Եվրոպայի «մանուկ բուրժուազիայի» առաջին ջատագովները, Ստ. Դաշտեցին ևս ցավով ու դառնությամբ էր նկատում, թե ինչ են բերում հասարակական նոր հարաբերությունները, ինչ արատներ են ծնվում, ինչպես են ապականվում բարքերը, ինչպես է բարոյալքվում մարդ անհատը: Նա մտահոգված էր իր հայրենակիցների լուսավորության խնդրով: Ստ. Դաշտեցու տաղերը խորհրդածություններ են անմարդկային բարքերի շուրջ, որոնք այդչափ տարածում էին գտել իր հայրենակիցների շրջանում և աղետալի հետևանքներ էին թողնում նրանց բարոյական նկարագրի վրա: Այս անբացատրելի չարիքից խոռված ու վիրավորված է նրա սիրտը.

Զգիտեմ թէ մարդ մարդի վատ է՞ր կանէ.

Վեր ծովի եմք, վզներիս ծանր էրկան է.

Մեք ճամփորթ եմք, մեր ճանապարհն էրկան է.

Աննուկ պիտիմք հաց ու ջուր ու կուտ տանէ: (53)

Կյանքի ու նրա արժեքների մի ամբողջ քննություն է ամփոփված Ստ. Դաշտեցու խոհախրատական գործերում, և, անշուշտ, հեղինակը այդ ուսմունքների սոսկ կրկնողն ու ընդօրինակողը չէ, այլև սեփական ապրումներով ու դատողությամբ հանդես եկող ուսուցիչը.

Ճշմարտին դէմ՝ ով որ ներհակ կու խօսի,

Առանց կարծիք՝ նա ոտխա այ, սատանայ՝... (53)

Կամ՝

Ե՞րբ ես տէսել վատին օրըն շատ քաշէ,

Քեզնից քաշօղն քան գքոյ շունն շատ քա՛շ է.

Գողանալով աստից անդից՝ շատ քաշէ.

Թո՛ղ հաւաքէ՛ իրան նման շանց կու տայ: (50)

Կամ՝

**Ժանգ¹⁸ կիտելն մարդիս մէկ փուչ անում է.
Թէ չէ՝ զաշխարհս շալակած ո՛վ կու տանէ:** (53)

Վաճառական լինելով հանդերձ՝ Ստ. Դաշտեցին մերժում է նյութական արժեքները՝ կարևորելով միայն քրիստոնեական բարոյական հավատալիքները.

**Աւետարանի բանէն ի գառ չաւատաս,
Որ վերջն քեզ առ խաւարն կու տանէ:** (52)

17–18-րդ դդ. միջին հայերենը աստիճանաբար հեռանում էր միջնադարյան երգերի միջին հայերենից, քանի որ լեզվի մեջ գնալով ավելի ու ավելի էին թափանցում բարբառային տարրեր ու օտար բառեր: Ուստի հանդիպում են հեղինակներ, որոնց բանաստեղծությունների զգալի մասը գրված է այս կամ այն բարբառով: Այդ հեղինակներից է Ստ. Դաշտեցին: Իր խրատ–ուսուցումները հասարակ ժողովրդին հասկանալի դարձնելու համար, բացի կրոնադավանաբանական արձակ երկերից ու դրանց կցված կրոնական ոտանավորներից, որոնք գրաբար են, երգիծական–խրատական ոտանավորները, հանելուկները, ինչպես նաև սիրային ու խրատական քառյակները Ստ. Դաշտեցին առավելապես գրել է Գողթնի բարբառով և աշուղական խաղերի ձևերով ու տաղաչափությամբ:

Ակնհայտորեն ուժեղ է աշուղական արվեստի ձևական ազդեցությունը Ստ. Դաշտեցու ստեղծագործությունների վրա: «Բացի մեկ–երկու կրոնական երգերից, նրա բանաստեղծությունները հորինված են աշուղական երգերի այս կամ այն տեսակի տաղաչափությամբ ու հնարանքներով, մի բան, որ հիշատակվում է նաև ոտանավորների խորագրերում»¹⁹, օրինակ՝ «Թաջնիս Ստեփաննոսի նահատակի հայերէն», «Ծիծաղելոյ վարսաղ Ստեփաննոսի Դաշտեցոյ», «Հայեւար թաջնիս Ստեփանի»:

Հատկապես իր խրատական–ինաստասիրական տաղերը Ստ. Դաշտեցին գրել է թաջնիս տաղաչափական ձևով, ինչպես, օրինակ, «Թաջնիս Ստեփաննոսի», «Թաջնիս հայերէն առ երախտամոռաց ոմանս, ի Ստեփանէ Դաշտեցոյ», «Թաջնիս Ստեփաննոսի նահատակի հայերէն» և այլն: «Թաջնիս», «թեջնիս» կամ «ջենաս» արաբերենում և պարսկերենում բառա-

18 Նոր Զուղայի բարբառում նշանակում է «փող»:
19 Սահակյան Հ., նշվ. աշխ., էջ 315:

ցիորեն նշանակում է «միասեռ դարձնել կամ մի բանի նմանվել»²⁰: Թաշնիսը մի հնարանք է, որի տարբեր տեսակները օգտագործվել են արևելյան աշուղական գրականության մեջ: Թաշնիսները հիմնականում բաղկացած են 3, 5 կամ 7 տներից, որոնց վերջնամասերն ունեն նման կամ նույն հնչեղությունը՝ տարբեր նշանակությամբ: Գարեգին Լևոնյանն այսպես է բնութագրում այն. «Թէճնիս ասում է այն ձեւը, որի տողերում վերջին բառերը միանման են, բայց ունեն տարբեր նշանակութիւն եւ ամբողջ երգը կազմում է այսպէս. ամէն տան ա. բ. եւ գ. տողերը վերջանում են միատեսակ բառով ու տարբեր նշանակութեամբ, իսկ դ. տողերը նման ա. տան տողերին, դարձեալ ուրիշ նշանակութեամբ»²¹:

Արևելյան աշուղները թաջնիսի տարբեր տեսակներն օգտագործել են խորհմաստ և հանելուկանման տաղեր հորինելու համար: Եվ միայն գրագետ վարպետներին է առաջադրելով զարդարուն այս ժանրը յուրացնել²²: Ստեփանոս Դաշտեցու թաջնիսները հայ աշուղական գրականության մեջ այս սեռի լավագույն օրինակներից կարող են համարվել:

**Ձեռումն ունէր հայելի՝
Ձէ թող թէ պարզ հայել ի.
Է՞ր գիս կամիս փոփոխել՝
Երբ իմ մօրէս Հա՛յ ելի: (56)**

5. Սիրային երգեր

Ստ. Դաշտեցու խոհախրատական-ինաստասիրական տաղերում կա նաև երրորդ բովանդակային կողմ: Դրանցում մասնավորապես աչքի են ընկնում սիրո թեմայով գրված նրա սակավաթիվ քառյակները: Թեև նրա տաղերի առաջին հրատարակողը՝ հրապարակախոս, բանասեր Ս. Սիմոնյանը²³, սիրո ապրումի պատկերները դիտարկում է խոհախրատական թեմայի մեջ, բայց դրանք կարելի է առանձնացնել:

Ստ. Դաշտեցու քառյակները նման չեն ժամանակի մյուս սիրերգերին: Դրանցում չի հյուսվում հեղինակի սիրո պատմությունը, չի տրվում սիրած աղջկա արտաքինի ամբողջական նկարագրությունը: Քառյակներից յուրաքանչյուրում ընթերցողը տեսնում է Ստ. Դաշտեցու սիրո վեպի այս կամ այն պահը, ավելի ձիշտ՝ լսում նրա այս կամ այն ապրումի արձագանքը: Իսկ սիրո

20 Տե՛ս <https://www.vajehyab.com/?q=%D8%AA%D8%AC%D9%86%DB%8C%D8%B3> (մուտք՝ 15.10.2021):

21 **Լեւոնեան Չ.**, Աշուղական արուեստը. տեսութիւն աշուղական բանահիւսութեան, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1904, գիրք 11, էջ 185, <https://grahavak.blogspot.com/2015/12/1896-1902-ix-1907-xvi-1912-xxiii-1897.html#b11> (մուտք՝ 24.11.2021):

22 Տե՛ս <http://bayram.arzublog.com/post/74966> (մուտք՝ 15.10.2021):

23 Տե՛ս **Սիմոնեան Ս.**, նշվ. աշխ.:

առարկայի արտաքինը նկարագրվում է՝ թեթև վրձնահարվածներով միայն ուրվագծելով նրան, օրինակ՝ «Կերպդ է լուսոյ որակէն» (56), «Առոգ մազեր, առոգ գիս» (60), «Մին գոհար այ, մին ակն այ» (63), «Այտք քո գերիս արին ոտ» (60), «Ան որ զսիրտս կու խոցէ, Պատճառ ունքիդ աղէղն է» (55), «Շրթունքդ է՛ իբր էրկու լար» (55), «Աչքս զգետտիդ կապուտ է» (55) և այլն:

Այսպիսով՝ բանաստեղծի սիրո մասին իմանում ենք քառյակներում նրա ապրումների պատկերումից: Ընդհանուր տպավորությունն այն է, որ Ստ. Դաշտեցին, չնայած իր անկեղծությանը («Լեզուս ասաց միշտ անկեղծ, Ինչ որ մէջ իմ սրտիս էր» (64)), հաջողակ չի եղել սիրո մեջ և ավելի տառապել է, քան վայելել ապրած սերը: Սիրո տառապանքի այս ապրումը բնորոշ է միջնադարյան տաղերգությանը:

**Քանի՛ քաշես՝ ինձի սուր,
Պըռկէդ նըշան ինձի տուր.
Յետոյ զգերիս թէ կամիս,
Առիծոյ եւ ինձի տուր: (60)**

Կամ՝

**Առոգ մազեր, առոգ գիս,
Արտասուեմ, որ առոգիս.
Քանի՛ արինն լացցընես՝
Մէկ հետ արի, ա՛ն հոգիս: (60)**

Կամ՝

**Թէ առիծ չէ, ինձ է նա,
Օտարի չէ, ինձ է նա.
Բոլոր գիշերն կու նայիմ,
Խղճա՛ գերույս, ինձ ձէնա՛: (61)**

Կամ՝

**Շիտկեմ քեզ էրկու մաշի,
Հանդերձդ լաւ էր կումաշի.
Ստեփանն որ զքեզ կու սիրէ,
Կ՛ասեն թէ է՛ր կու մաշի: (60)**

Այս քառյակների ուշադիր ընթերցումը մեզ նկատել է տալիս, որ նկարագրվող կնոջ հագուստի, ապրելակերպի ու արտաքինի մասին եղած հիշատակությունները մեկ կնոջ վերաբերյալ են: Ստ. Դաշտեցին հավատարիմ է իր միակ սիրուն: Ինչպես նկատում է գրականագետ Հասմիկ Սահակյանը, «Դաշտեցին այս հարցում հավատարիմ է իր ժամանակի բանաստեղծության ընդհանուր ոգուն, նրա սերը ևս ավելի կոնկրետ է, քան նկատում ենք տաղերգության մեջ: Բայց սիրո և կնոջ հանդեպ ունեցած իր վերաբերմունքով Դաշտեցին ավելի շուտ սառը մտածող է, քան զգացող, ավելի տեսաբան է, քան հույզի գերի»²⁴:

Ստ. Դաշտեցու սիրային քառյակներում կինը հանդես է գալիս վաղուց հայտնի ու կրկնված՝ մեղավորության ու չարության պիտակներով:

**Մեղքն որ դրախտէն մեզ հանեց,
Արուին խօ չէ, իգին է: (65)**

Կամ՝

**Կի՛ն, դու մեղաց ծովն անկար,
Կամի՛ս ապրիլ, լողա՛, կի՛ն: (56)**

Ստ. Դաշտեցու սիրային քառյակները, սակավ բացառություններով, հորինված են ժողովրդական խաղիկներից եկող գուգահեռականության հնարանքով: Դրանց առաջին տողերը վերաբերում են ժամանակի կենցաղին ու առօրյա հարաբերություններին: Դրանցում առատորեն օգտագործված են բառախաղեր ու ճոխ հանգեր, ինչը բանաստեղծությունը զրկում է հուզականությունից: Մինչդեռ խոհախրատական քառյակներում, որոնք ուսուցողական են, այդ արհեստականությունը թերևս այնքան էլ չի զգացվում: Այս տեսանկյունից միանգամայն ճիշտ է նկատել Ա. Չոպանյանը, որ Ստ. Դաշտեցու ոտանավորներում կա «ճարտար տաղաչափություն» և «կյանքի սուր դիտողություն»: «Նա կը սիրէ ճոխ յանգն ու արուեստականութիւնը, բառախաղը և ատոնց կը գոհէ յաճախ իմաստի յստակութիւնն ու մտածումների տրամաբանական յաջորդականութիւնը»²⁵:

Բացի երգիծական-պարսավական (5) և խրատական-իմաստասիրական (10) տաղերից՝ Ստ. Դաշտեցուց մեզ են հասել ևս երկու տաղ: Մեկը պատմական է և, ինչպես երևում է վերնագրից՝ «Ոտք, շարադրեալ ի Ստեփանոսէ Դաշտեցոյ, սակս արձանագրութեան դրան եկեղեցոյն Սուրբ Ա-

24 Սահակյան Հ., նշվ. աշխ., էջ 201:

25 Չոպանյան Ա., նշվ. աշխ., էջ 1:

նաքելոյն Թօմայի որ ի յԱգուլիս, ի խնդրոյ Տեառն Ոհաննու Արհիեպիսկոպոսի եւ առաջնորդին Գողթնեաց նահանգի», գրվել է Ագուլիսի Սուրբ Թովմաս եկեղեցու դռան ճակատին արձանագրվելու համար, իսկ երկրորդը՝ «Գանգատ ըստգլխանաց ապստամբողի անձին նոյնոյ մեղապարտի Ստեփաննոսի ուրեմն Դաշտեցոյ», հոգևոր տաղ է և զետեղված է Սուրբ Ղազար կղզու ձեռագրատան թիվ 20 ձեռագրում:

Տաղասաց Ստեփանոս Դաշտեցուց մեզ հասած 17 տաղերը իրենց բովանդակությամբ, ձևով ու լեզվով մեծ արժեք են ներկայացնում ինչպես հայ գրականագիտության և բարբառագիտության, այնպես էլ հայ մշակութային պատմության ուսումնասիրության համար:

Սոսե Բ. Պողոսյան – զբաղվում է Նոր Զուղայի 17-18-րդ դարերի գրական-մշակութային կյանքի հարցերով: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ գրականության պատմությունը, Նոր Զուղայի հայ մատենագրությունը և տաղերգությունը: Ունի 3 տպագրված հոդված:

Էլ. ԽԱՍՏԵՆ՝ sosse.bogozian@gmail.com

Summary

POET STEPANOS DASHTETSI

Soseh B. Poghosian (New Jugha, Iran)

Key words - Stepanos Dashtetsi, poems, poet, atirical and condemning poems; instructive and philosophical poems, merchants of New Jugha, Isfahan, the dialects of New Jugha, the Armenian literature of the 17th-18th centuries, Tajnis.

Poet Stepanos Dashtetsi from New Jugha lived and worked in the second quarter of the 17th – the first quarter of the 18th cc. During the forced deportation carried out by Shah Abbas, his parents have been resettled from Dasht village of the Goght canton to New Jugha, where he was born. The pseudonym Dashtetsi has been taken from here.

Dashtetsi received education at Amenaprkich Monastery of New Jugha, he was a student of Stepanos Jughayetsi and was specialized in philosophy and theology. After receiving the primary education in Isfahan, he studied at the high school of Vatican in Rome.

He mastered Old Armenian, Persian, Turkish, Georgian languages, as well as Latin and Hindi.

In the beginning, Dashtetsi was a priest but later, due to some circumstances, he became a merchant. He visited many countries: he was in Persia, India, Turkey, Greece, Italy and a

number of European countries. During his travels, he saw and learned a lot, and in this connection he became circumspect, experienced, patient and wise.

The theological and polemical works of the author are most popular. Meanwhile, his image as a literary and public figure would be incomplete without studying his poetry.

In the article we have examined Dashtetsi's poems, which have been divided into three groups: a) satirical and condemnatory; b) instructive and philosophical; c) love.

In the poems of the first group, he, ridiculing and condemning, points to the common delusions among the inhabitants of New Jugha: hypocrisy, greed, worship of everything foreign, ignorance and envy. In the poems of the second group, he tries to enlighten the society through moral teachings. His poems on these two main topics are written mostly in the eastern form of Tajnis in the New Jugha dialect.

Love songs stand out among the poems of Dashtetsi. They continue the traditions of the medieval poetry with their depiction of the external appearance of the object of love and suffering caused by the devotion of a lover.

17 poems of Stepanos Dashtetsi that have reached us with their content, form and language are of great value both for the Armenian literary criticism and for the dialectology, as well as for the study of the history of Armenian culture.

Резюме

ПОЭТ СТЕПАНОС ДАШТЕЦИ

Сосе Б. Погосян (Новая Джуга, Иран)

Ключевые слова – Степанос Даштеци, стихи, поэт, сатирически-полицейские стихи, поучительно - философские стихи, купцы Новой Джуги, диалекты Новой Джуги, армянская литература XVII-XVIII вв., таджик.

Поэт Степанос Даштеци из Новой Джуги жил и творил во второй четверти XVII-первой четверти XVIII вв. Его родители во время осуществленной Шах-Аббасом насильственной депортации были переселены из села Дашт провинции Гохт в Новую Джугу, где он и родился. Отсюда и псевдоним Даштеци.

Даштеци получил образование в монастыре Аменапркич Новой Джуги, был учеником Степаноса Джугаеци, специализировался на философии и богословии. После получения в Исфахане начального образования учился в Риме, в высшей школе Ватикана. Владел древнеармянским, персидским, турецким, грузинским языками, латынью и хинди.

Вначале Даштеци был священнослужителем, однако позднее в силу обстоятельств стал купцом. Посетил много стран: был в Персии, Индии, Турции, Греции, Италии и ряде европейских стран. Во время своих путешествий многое увидел и узнал, приобрел богатый жизненный опыт, стал осмотрительным, терпеливым, мудрым.

Наиболее известны богословско-полемические сочинения Даштеци. Но его образ как литературного и общественного деятеля будет неполным без анализа его поэзии. В статье нами рассмотрены стихи Даштеци, которые мы разделили на три группы: а) сатирически-порицательные; б) поучительно-философские; в) любовные.

В стихах первой группы он указывает на распространенные среди жителей Новой Джуги лицемерие, жадность, поклонение всему иностранному, невежество, зависть, высмеивая и порицая их. В стихах второй группы он через мораль своих произведений пытается просветить общество. Его стихи на эти две основные темы написаны в большинстве своем в восточной форме «таджнис» на новоджультинском диалекте. Среди стихов Даштеци выделяются любовные песни, которые своим изображением внешнего облика объекта любви и страданий, причиненных преданностью влюбленного, продолжают традиции средневековой поэзии. 17 дошедших до нас стихотворений Степаноса Даштеци, их содержание, форма и язык представляют собой большую ценность как для армянского литературоведения и диалектологии, так и для изучения истории армянской культуры.

REFERENCES

1. **Abrahamyan R.**, Step'anos Dashtets'i, "Teghekagir hasarakakan gitut'yunneri", Yer., 1956, N 12 (**In Armenian**).
2. **Ch'opanean A.**, Step'annos Dashtets'ii mēk hetak'rk'rakan gruatsk'ž, "Anahit", P'ariz, 1939, N 1-2 (**In Armenian**).
3. **Lewonean G.**, Ashughakan aruestē. tesut'iwn ashughakan banahiwsut'ean, "Azgagakan handēs", Yer., 1904, girk' 11 (**In Armenian**).
4. **Martirosyan A.**, Martiros Ghrimets'i, Yer., 1958 (**In Armenian**).
5. **Mirzoyan H.**, Hovhannes Mrk'uz Jughayets'i, Yer., 2001 (**In Armenian**).
6. **Sahakyan H.**, Ush mijnadari hay banasteghtsut'yunē. XVI-XVII dd., hat. 1, Yer., 1975 (**In Armenian**).
7. **Simonean S.**, Norayayt taghasats' mē Step'anos Dashtets'i, Pēyruť, 1981 (**In Armenian**).
8. **St. Dashtets'i**, Koch'nak chshmartut'ean, Mesrop Mashtots'i anv. Matenadaran, dzeragir N 9049 (**In Armenian**).